5-րդ շաբաթ

Թեմա՝ «Եղանակներ»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 որպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

Հարցեր՝

1. Ինչպիսի՞ն են եղանակները ձեր բնակավայրում:
2. Ո՞րն է ձեր ամենասիրելի եղանակը:
3. Ինչու՞ եք սիրում հենց այդ եղանակը:
4. Ի՞նչ եք անում, երբ ձեր ամենասիրելի եղանակն է:
5. Ո՞րն է ձեր ամենասիրելի եղանակի ամենամեծ թերությունը:
6. Ո՞րն է ձեր ամենաքիչ սիրած եղանակը:
7. Ինչու՞ չեք սիրում այդ եղանակը:
8. Ո՞րն է այդ եղանակի ամենամեծ առավելությունը:
9. Ձեր կարծիքով՝ ո՞ր եղանակին ի՞նչ պետք է անել:
10. Ինչպիսի՞ եղանակ կուզեիք, որ լիներ, բայց չկա:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

Կիրառելի բառեր և արտահայտություններ՝

գարուն	ցուրտ	ծաղիկներ
ամառ	արև	թռչուններ
աշուն	անձրև ձյուն	կենդանիներ
ձմեռ	քամի	բնություն
տաք	ծառեր	ծով

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

Բնագրի նմուշ՝ 1

Իմ ամենասիրելի եղանակը գարունն է: Բայց ոչ միայն նրա համար որ գարնանը ես եմ ծնվել, այլ նաև որ գարնանը շատ սիրուն է, գարնանը համով մրգեր են լինում և ոչ շատ ցուրտ է ոչ էլ շատ շոգ: Դա ամենալավն է: Ես չեմ կարող ասել, որ ինչ որ եղանակ չեմ սիրում: Ես կարող եմ ասել, թե որն եմ ամենաքիչը սիրում: Ամենաքիչը ես սիրում եմ աշունը: Աշունը ամենաքիչն եմ սիրում, որովհետև աշունը ունի նոյեմբերին, իսկ նոյեմբերը ես չեմ սիրում: Նոյեմբերը չեմ սիրում, որովհետև առաջին անձրև է գալիս և մենք ֆուտբոլ չենք կարողանում խաղալ, երկրորդ ցուրտ է և դու ստիպված պետք է տաք հագնվես, որը ես ընդհանրապես չեմ սիրում:

Աղբյուր՝ levonghalamqaryan.wordpress.com/2018/11/08/իմ-սիրելի-և-չսիրելի-եղանակները/

Բնագրի նմուշ՝ 2

Դեկտեմբերյան երեկոներից մեկն է: Կանգնած եմ պատուհանի մոտ ու հիանում եմ ձյան ադամանդանման փաթիլներով, որոնք երկնքից մեղմորեն իջնում են ցած ու իրենց հետ խաղաղություն ու վճիտություն են բերում: Նայում եմ նրանց ու սիրտս միանգամից սիրով ու ջերմությամբ է լցվում: Նրանց հետևելու ընթացքում ցանկանում ես դուրս վազել ու դառնալ նրանց մի մասը, դիպչել նրանց ու զգալ այն հանդարտությունը, որ բերում են մեր աշխարհ: Փաթիլները սկսում են ավելի ու ավելի դյութել, փարվել ու ջերմացնել, որ մոռանաս ձմռան ցրտի ու սառնամանիքների մասին ու մի պահ նաև ուշադրություն դարձնես ու հիանաս նրա գեղեցկությամբ, խորհրդավորությամբ ու հրաշքներով:

Նայում եմ այդ փոքրիկ աստղերին, որոնք երկնքից իջնում ու գրկում են խոնջացած հողը, և միանգամից հիշում եմ «Գտնված երազ» մուլտֆիլմը: Հիշում եմ բարի ծերուկին, ով իր քունն էր կորցրել, արծաթե գեղեցկուհուն, ու Ռուբեն Հախվերդյանի «Ձյունը» երգը: Երևի բոլորն էլ տեսել են այդ մուլտը, ու համոզված եմ, որ բոլորն էլ այն շատ սիրում են: Սիրում եմ այդ մուլտի բարությունը, պարզությունը, այն ինձ միանգամից հիշեցնում է ձմեռը:

Գիտե՞ք, առաջ չէի սիրում ձմեռը: Այն ինձ համար միշտ եղել է կոպիտ, դաժան ու սառնասիրտ, բայց վերջերս իմ շատ սիրելի ընկերուհիներից մեկը ասաց, որ ձմեռն ամենաշատն է սիրում: Նա շատ արևոտ ու խինդով լցված մարդ է, և ինձ զարմացրեց նրա ասածը, բացի այդ, ես սկսեցի բացատրություններ փնտրել նրա ասածի մեջ: Կարծում էի, որ աշունն է սիրում, բացի այդ նա նյութ էլ ունի գրած աշնան մասին, իսկ հիմա՝ ձմեռ... Հասկացա՛, ես վերջապես այսօր հասկացա, թե կոպտության ու սառնասրտության հետևում ինչ է թաքցնում ձմեռը: Այն իր խորքում ավելի շատ արև է պահում, քան ամառը, ավելի մեծ սեր, քան աշունը ու ավելի շատ բարություն, քան գարունը: Այն

երազանքների ու դրանց իրականացման, հրաշքների ու կախարդանքի համաձուլվածքն է… Կարծում եմ գտել եմ իմ եղանակը…

Աղբյուր՝ http://www.17.am/%D5%AB%D5%B4-%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A8/